

ուրիշ ձեռագիրներ, մի աւետարան Զ եւ ժ. Թուին եւ մի Մաշտոց 1473 թուին, օր հոշակաւոր դաւառու Արարատեան, ի գլուղըս, որ կոչի Ուրծ, ընդ հովանեաւ սր. Աստուածածնիս եւ սր. Սահմանոսիս⁽²⁾։ Նորա աշակերան էր Վրթանէս գրիչ, որ 1491 թուին գրել է մի Յայտաւորք, օր յանապատիս յԱւրծայ, որ կոչի Արջառարեկո⁽³⁾։

Ստացողն է Մելիքսեթ կրօնաւոր՝ «ի վայելումն անձին եւ յիշատակ հոգոյ իւրոյ եւ ծնաւդաց իւրոյ Գուգարին եւ Սիրմին եւ քրեւրցն Թանկասեղին եւ Թամիկին»։ Մելիքսեթ արեղան՝ իւր ձեռքով գրած յիշատակարանի համեմատ՝ էրերան փոքրիկ վանքի վանահայրն էր, Աւրծից գէպի հարաւ եւ Զինջիրուի Ս. Կարապետից քիչ դէպի հիւսիս՝ Ղաղարու գիւղի մօտ, Շահապու եւ Ս. Խաչ գիւղերի մէջ, գէպի Վեղիի դաշտը նայող լեռան լանջին։ Զեռքիս տակ չունենալով այժմ վանքի նկարագրութիւնն ու արձանագրութիւնն ըրի արտագրութիւնը, որ կատարել ենք անձամբ, չենք կարող ժամանակագրական եւ պատմական ճիշդ տեղեկութիւն տալ, բայց վաղ չէ քան ժ.Գ. դարը։ Այն ձեռագրի մէջ Մելիքսեթ արեղան նկարագրում է իւր շինարարութիւններն ու աշխատանքը. «չինեցի զժամատունս եւ ըզկրկին գաւիթս եւ զերկու տնտեսատունս ամառան եւ ձմեռան . . . նորոգեցաք ըզվանքս եւ շնորհազարդ զարդարեցաք եկեղեցիս սգեստիւք պատարագաց, նաեւ մանկամբ սր. սիոնի, զոր տր. Աստուած ի կամս իւր պահեցէ, ամէն»։ Ապա գրել է տալիս եւ այս Յայտաւորքը եւ նուիրում «ի սր. վանքս էրերան կոչեցեալ ի դուռն սր. Աստուածածնիս եւ սր. Գէորգիս»։ Խնդրում է յիշել իւր ծնողների եւ քոյրերի հետ, որոնց անունը յիշուցցաւ, եւ եղբայրը Տիրացու. նաեւ «վարդապետ միոյ տր. Սարգսին երախտաւորին»։

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊ. ՅՈՎՍԷՓԵԱՆՅ

Ն. Նախիջեւան

ՆԵՒԱՐԲ ՆԱԽՆԵԱՑ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

ՅԱԻԵԼՈՒԱԾ

Ի ՎԵՇՏԱՍԱՆ ԱՍԱՑՈՒԱԾՍ Ս. ԵՓՐԵՄԻ

ՎԱՍՆ ՆԻԿՈՍԻԴԵԱՅ ԲԱՂԱՔԻ

(Շար. Սլոն, Թիւ 4 էջ 123)

Որպէս զի ինքն յողթէ, յորժամ բազմանայ քան զըմբողս⁽¹⁾ իւր։ Հրաւիրեա առ նա զկարուստս, զի պարտեցի ի մէջ բազմաց։ Թէ ամաչես խորգ զգեներու որ սակաւն է, յորժամ զգեսցիս, սակաւ է խորգ մեղաց մերոց, եւ մոխիր սրբել զներկուածս մեր։ Թէ ամաչես խորագն զգեներու, պատկառես ի լիտի զարդուէ։ Ա՛ռ սակաւ ի խորագն հանդերձէ, եւ էջ ի զարդս տանաց⁽²⁾։ Ա՛ռ քեզ զմիջին հանդերձն, մի զլիտի եւ մի զզցուց⁽³⁾։ Թող յխոնարհս եւ զբարձունս, եւ ընտրեա քեզ զմիջինս։ Մի՛ մի աւր առ խոնարհութիւն, եւ միւս աւր առ փափկութիւն։ Մի՛ մի աւր առ տխրիլ, եւ միւս աւր առ զրգանս։ Կամ վերացա՛ր ելիր յերկինս, կամ խոնարհեցար իջեր յանդունդս։ Խիստ է քեզ բողբոջութիւն, մի՛ աղանիր լիտերար⁽⁴⁾։ Մի՛ պաշտեր զրոկութիւն, եւ մի զլիտի հանդերձ ոտից։ Մի՛ աւր խոնարհութիւն մեծ, եւ միւս աւր մեծ զարդարանաւք։ Ի միում ժամու լալիւն յորդ, եւ միւս աւր ծաղր լիտի։ Զայնչափս ընտրեա քեզ որ յաւրինեցան յընտրողաց⁽⁵⁾։ Յաժուռն աւզ վայելէ ոտին, որ գայ յաղաթս, գայ առնուլ զաւզնութիւն։ Մի՛ վնասեսցէ տեսողաց, սէգ կաշկի չէ աւրէն կոխել զգուռն Աստուծոյ։ Ո՛ր որ գաս ի հաշտեցուցանել, մի՛ դար ի բարկացուցանել։ Յորժամ խնդրէ պարտաւոր ի մեծ խոնարհութիւն իջանէ, զի զարթուցէ խոնարհութեամբ զողորմու-

(1) Օր. ունի զըմբողս։

(2) Բառը «տանաց» ինձ անձանթ. գուցէ աղաւաղեալ գրութիւն, փխկ. պատանաց։

(3) Այսպէս գրեալ յօր.։

(4) Նորածնե բառ։

(5) Օր. գրէ յնորոգաց։

(*) Բարխուտարին. Արցախ. եր. 270, 2 հո. էջմ. № 964 (կար. 944)։

(2) Ալիշան. Այրարատ. 443։

թիւնս պահանջողին: Սաղայ լալիւն⁽¹⁾ յապաշխարդին, խաղայ դու թ ի պահանջողին: Արտասուք զոր հեղու ապաշխարող, չիջուցանէ՝ զցասումն գատաւորին: Անմիտք կանայք զարդարին եւ գան խնդրել զողորմութիւն: Զի թէպէտ եւ արդարք էին, մեղք էին ի զարդս նոցա: Ահա փնասք ի ձեռս նոցա, կռածոյիւքն զոր ունէին ի ձեռս: Ամաութ եւ պատկառանք ի գլուխս նոցա, զարդուք տան զոր ունին ի գլուխս: Կուտեն մեղս ի գլուխս իւրեանց, զարդուք տան զոր ունին ի գլուխս: Գլուխ որ սիրէ զզարդարանս, պսակեալ են նմա փնասք: Եւ եթէ ոչ գիտեն, եթէ զարդուք իւրեանց փնասք են դառնութեանց, հարցցուք գտեսաւոյն, թէ ոչ փնասիցեն նմա զարդք նոցա, զարդ որ յանցուցանէ գտեսաւոյն, փնաս մեծ է զարդարկոտաց: Ընդ ո՛ հայկեցի Բորձրեալն, ընդ պիւճանալն քո թէ ընդ աղաչելն: Բո իսկ մեղքն շատ են քեզ, փախի՛ր յաւտար մեղաց: Զարդ որ յանցուցանէ գտեսաւոյն, փնաս մեծ է զարդարկոտացն: Եթէ այլ քո զարդասէր է, զարդարեա նմա ի տան իւրում: Եթէ գերէ զնա զարդն քո, առանց մեղաց է զարդարելն քո: Ահա հանգիստն քո ընդ աւգալի քում, զի եղև զարդըն ի⁽²⁾ հանգիստ քո, եւ եղև մասն քո ամուսին քո: Եթէ իմաստուն է այլն քո, եւ ոչ քաղցրանայ նմա զարդն քո: Առն քում ոչ քաղցրանայ զարդն քո, քանի՛ եւս բասրեսցէ աւտարն: Աւրէն է զի վարք քո եղիցին քեզ զարդարանք: Եթէ վարք քո գեղեցկացուցանեն զքեզ, չե՛ս կարաւտ դու հայկելոյ⁽³⁾: Սակաւ է հայկիլ այսմ երկնաւոր գեղեցկութեան, հայկիլ Աստուածութեանն բաւական է ծածուկ գեղոյն: Ի հրապարակի եւ ի տան գոյի զարդն այն, բարի վարուց որ ի ներքս է տեսանէ զոյլէ, որ արտաքոյ է լսէ աւրհնէ: Իսկ զարդն այն լիտի, տղե՛ղ է ամենայն ուրեք. որ ի ներքս տեսանէ, այսն է, որ արտաքոյ հայի բստգելու⁽⁴⁾: Եթէ կնոջ ասն մահկանացուի ոչ վայելեն զարդարանք, որք ի խաւսս կան Ամենակեցուցին, մեծ մեղք են զարդարանք: Կոյս որ խաւսեցաւ

որդւոյ, զխոնարհումն որդւոյ զգեցաւ: Փեսայն իւր զխոնարհութիւն զգեցաւ, եւ նա զգեցեալ է զփափկութիւն: Եթէ տոնակնոջ ցածնոյ ոչ վայելեն զարդարանք, քանի՛ եւս ցասուցանէ զարդ քո զխաչելութիւնն: Աշակերտաց եկիր զգեցուլ զգաստութիւն, եւ յանցուցանէ զարդ քո գտեսաւոյն: Զոր թողցէ պահանջողն, եթէ զծածուկ մեղան, եթէ զյայտնին: Մի՛ ժողովեր քեզ պարտիս ի ձեռն զարդարանաց: Ի ծուփ անկեալ են տեսողք, թէ տան պճնեալ վասն ո՛յր է: Մի մեռանի ի քեզ աղամբ, եւ միւսն եւս լեզուաւ իւրով. համարուն եւս քո չար սպանանէր զմիւս եւս լսելեալք իւրովք: Որ սպանանէ մի սպանումն մեռանի, քանի՛ եւս վրէժս պարտիցիս, զի ամենայն որ տեսանէ զզարդ քո, այլ այլո՛յ խորհիլ զքէն: Կային որ սպան մի սպանումն, երեւեալ եւ տատանեալ եղև յերկրի⁽¹⁾ Մի լինիր պատճառք մահու, եւ մեռանիցին քեւ խաւսունք: Մի՛ եղիցին քեզ զարդ քո նիւթ որ փնասէ եւ զգլուխս եւս: Ո՛ կոյսք անմիտք, զարդք ձեր լինին ձեզ գատաւորք: Կոյս որ միշտ սիրէ զզարդարանս, ոստին մին է զարդն նորա: Եթէ կամի ասասցէ մեղ, յո՛ր պատճառս զարդարեալ իցէ: Եթէ նա ոչ կամիցի ասել, զարդն իւր քարոզէ զնմանէ: Դատի զնա զորդն իւր ի հրապարակս, եթէ տան պճնեալ, վասն է՛ր, վասն ո՛յր, եւ ո՛ւմ է, եւ ընդէ՛ր եւ վասն է՛ր, մատամբ ցուցանէ զնա: Թէ սա է Գրիստոսի, հաւանեցուցանէ զմի իւրեւ զբազումս, եւ զբազումս իւրեւ զմի: Թէ խորհուրդք նորա յերկրի են, եւ ի մոխիր խորհին միտք իւր, չունի սէր առ կենդանին, զի առ մահկանացուի են խորհուրդք իւր: Անուամբ միայն Աստուծոյ է, եւ պճնելովն առ մարդ է: Տեսէք զարտաքին երեսուն, զի յանդիմանեն զմիտս ներքինս: Լիտութիւն մտաց իւրոց հեղաւ գանդամաւք իւրովք, զաւրացաւ ներքին լրկատութիւն իւր. եթէ յայտնիքն տղեղ են, քանի՛ եւս տղեղ են զաղտնիքն: Զի՛ք ողորմ ի զարդու, թէ խնայեսցէ ի զարդարեալն: Զարդ անմտին նեղեաց զնա, եւ եզ զնա իւրեւ նպատակ նետից: Յուզէ ի նա զամենայն միտս, զրզոն է ի նա զամենայն լեզուս: Դզրդէ ի նա յամենայն գոն-

(1) Օր. ունէր լալիւն, ուղղիչն յաւելու ի ներքոյ բառին ւ:

(2) Ի յաւելեալ յուղղիչն ի վերայ տողին:

(3) Օր. գրէ հայկելոյ:

(4) Նոր ինչ բառ:

(1) Տ. Ծննդ. 4, 8 - 15:

հաց. դապահանեալս եւ զհաստատունս ի միտս. ապահանեալքն խորհին զազտեղութիւն, զի թէ կամին չեն հեռի: Հաստատունքն խորհին սրբապէս, եթէ ի բացէ՝ աւղուտ է կեալ: Երկուք կողմանք չարք կարծիս կարծեն զգորգարեալ⁽¹⁾ կնոջէ: Այս աւղուտ է ի զարգուէ անմիտ կնոջ վարդասիրի: Զի իրրեւ ինքն մաքուր է ի ծածուկ, ազտեղէ զնա զարգն յայտնի: Եւ իրրեւ սուրբ է ամենեւին, զրպարտի վարդուն ի հրապարակս: Բանայ զգիր իւր, ընթերցանի ի նմա յամենայն կողմանց: Զամենայն ինչ յաճախէ առ նա. զակնարկել թուէ, ի հրապարակս զըզնացս նորա: Դայ զկնի նորա բամբաս, երթայ առաջի աշպնութիւն: Հարցուած յաջմէ նորա, քննութիւն յահեկէ իւրմէ: Մոռացի նմա որ զինչ ետեսն ի զարգուէն եթէ ուրացի զնա: Քանի՜ քաղցր է լուծ քո Տէր⁽²⁾ եւ թեթեւ բեռն սիրոյ քո: Երանի որ նովաւ զարգարեցաւ, զի յաճախէ նմա զարգն իւր գովեստ: Եւ որ քեւ ոչ զարգարի, յաճախէ նմա զարգն իւր կորանս: Բայց թերեւս ո՛ մոլեկան⁽³⁾ վերտիցիս, թէ յաճախեցաք յարգել զքեզ, զլիտութիւն քո պատմեցաք: Ոչ զագնութիւն որպէս կարծեսդ. ձախողակի եւ լսելիք քո, որպէս մաւրն քո ի զրախտին որ ձախողակի լուաւ զպատուիրանն ի Բարձրելոյն⁽⁴⁾, զի զպտոյնն որ լի էր անարգանաւք, կարծեսց եթէ լի իցէ վայելչութեամբ: Կարծեսց եթէ փառս զգեցուցանիցէ պառւոյն որ մերկ արար զնա: Եթէ գեղեցիկ պաղովն այն տգեղացաւ մայրըն, յարգեն զարդ եւ կաւչիկ գեղեցիկ, քանի՜ եւս տգեղիցեն⁽⁵⁾ զգոտերս նորա: Որ տեսանէ զկին եւ ցանգայ, չնացաւ որպէս եւ գրեալ է⁽⁶⁾: Դո՛ւ տաս պատասխանի ընդ այնր դառն բեկման, մի՛ մեղուցէ զարդ քո զեղբարս քո, զի լիցին չնացեալք ի ծածուկ: Ատելի է քեզ չնութիւն, մի՛ լինիր պատճառք չնութեան: Երկիր յայնմանէ եւ յայնմանէ, զի մի՛ առնաւրէնութիւն է երկոցունց: Մի՛ լիցի քեզ բռնութիւն, զգաստացուցիչ ի միջէ կող-

մանէ ցոյց, յերկոսին կողմանս, կամք քո պահեալ են զքեզ: Պահեալ է մարմին քո սրբապէս, պահեա եւ գտեսիլ քո զգաստարար: Դողայ սիրտ քո ի չնութենէ, եւ յանցուցանէ զարդ քո գտեսաւզս: Սուրբ է ի մեղաց մարմին քո, եւ պի՛ղծ ես ի միւսում կողմանս: Զգուշտան անմիտք յիմարարար, եւ անկանին ծածուկ ի կորուստ: Ընդ այն հպարտացուն միտք քո եթէ գերէ գեղ քո գտեսաւզս, եղիցի քեզ ասել թէ երանի այնմ որ տղեկ էր: Ամ քան զամ⁽¹⁾ թառամի զեղ քո, եւ մտանէ զեղջ ի ձերութեան: Ժամ քան զժամ պակասեն կեանք, եւ մտանէ տրտմութիւն եւ աւրհաս: Գեղ որ շահի զպարտիս, լաւ է քան զնա տգեղութիւն: Տգեղութիւն որոյ յստակ է սիրտ, սիրելի է զուարթնոց տեսիլ նորա: Առնի վարդ կնոջ անմտի, քարոզ մտաց իւրոյ: Զի նկարեալ են միտք ներքինք ի վերայ արտաքին երեսաց իւրոյ: Զարդն արտաքին քարոզէ թէ զինչ կայ ի ներքս ի սրտին: Կարծիք որոյ ծածուկ են խորհուրդք իւր, եւ յայտնեալ տարածին զամենայնիւ: Երեսք իւր հայելի են, եւ նկարեալ ունի ի նոսա զմիտս իւր: Եւ որ ոչ քաջ տեսանէ, կարէ տեսանել թէ զինչ է նա, հայեցած աչացն քարոզէ եւ զուշակէ թէ ուր են միտքն: Նա զուշակէ թէ լիտի է, եւ նոյն քարոզէ եւ թէ ծանր է: Հայեցած աչացն ուսուցանէ, թէ զո՛ խնդրեն միտք նորա. եթէ զԳրիստոս, զայն քարոզէ, եւ եթէ զայլ ոք, զայն զուշակէ: Շարունակիլի

Ֆ. Յ. Մ.

ԻՇԱՄԵՂՈՒ ՈՒ ՄԵՂՈՒՆԵՐ

Իւ շինած գործէն
Վարդեան կը հանչեն:

Մեղրի քանի մը խորխոսներ
Անհէր էին մնացեր,
Իշամեղուաց երամ մը զող,
Միւս կողոպտող, բալանող,
Խորխոսներուն այդ կ'ըլլայ տէր:
Դեմ կենալով Մեղուներ՝

Պիծակի մի
Խնդիրն ասեմս կը հանուի:

(¹) Փոխանակ բառիցս ամ բան զամ ուղղիչն զնէ ի լուսանցս՝ աւր բան զաւր:

(¹) Օր. ունի զարդարեալ:

(²) Տէր ի լուսանցս յաւելեալ ի բուն իսկ գրչէն:

(³) Օր. վրիպանօր գրէ՝ ոմոլեկան:

(⁴) Օր. գրէ ի Բարձրելոյն:

(⁵) Տգեղեմ իրրեւ ներգ. պակասէ ի բառգիրս:

(⁶) Մթ 5, 28: